ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հաստատված է ամբիոնի նիստում**

_Մանկավարժություն և հոգեբանություն_
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ _Լ.Գ.Բաղդասարյան_ /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № 14__

«_06_» _փետրվար_ 2024_ թ.

# ՄՀ/բ-142 - ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Դասիչ, դասընթացի անվանում

# ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

**Մասնագիտություն՝** 011301.00.6 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝ 011301.03.6** - Սոցիալական մանկավարժություն
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** **մանկավարժության բակալավր**
/բակալավր, մագիստրատուրա/

**Ամբիոն՝** ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

**Ուսուցման ձևը՝** **_Առկա**

**Կուրս/կիսամյակ** առկա _*1-ին կուրս--2-րդ կիսամյակ,*

*2-րդ կուրս, առաջին կիսամյակ*

**Դասախոս(ներ)՝** Ս. Բեժանյան

Էլ. հասցե/ներ_bejanyanseda@mail.ru

Վանաձոր- 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում ………………………………… 3
2. Դասընթացի նպատակը և խնդիրները ……………………………………………… 3
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները ……………………………………………… 4
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները …………………………………… …
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների ………………………………………………… …
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը ………………………………………………… …
7. Ուսումնական աշխատանքները տեսակները …………………………………… …
8. Դասավանդման մեթոդներ……………………………………………………………… …
9. Ուսումնառության մեթոդները ………………………………………………………… …
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը …………………………………………………………………………………… …
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ…………………
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ……………………………………… …
    - 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ …
    - 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ……………………………………………… …
    - 12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ………………………………………………………………………………… …
    - 12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ ………. …
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում………………… …
14. Գնահատում…………………………………………………………………………… …
    - 141. Ուսանողների գիտելիքների ստուգում……………………………… …
    - 14.2. Հարցաշար…………………………………………………………………… …
    - 14.3. Գնահատման չափանիշներ……………………………………………… …
15. Դասընթացի համառոտ նկարագիրչ……………………………………………… …

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

## 1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].

«Սոցիալական մանկավարժություն» դասընթացը կարևորվում է Բարձրագույն մասնագիտական կրթության «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է 011301.03.6 կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտական» կրթամասում:

## 2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

2.1. Դասընթացի նպատակն է.

- Ուսանողների կողմից սոցիալական մանկավարժության որպես ինտեգրատիվ գիտության տեսական դրույթների, սոցիալական դաստիարակության և սոցիալականացման վերաբերյալ տեսական ու գործնական գիտական գիտելիքների յուրացումը:
- «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության զարգացման օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների փոխանցում ուսանողներին:
- «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության չափանիշների հետազոտության շրջանակներում հմտությունների և կարողությունների ձևավորում ուսանողների մոտ:
- «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության համեմատության և վերլուծելու ունակությունների ձեռքբերում ուսանողների կողմից:
- «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության վերլուծելու կարողությունների ձևավորում տարբեր իրավիճակներում:

2.2. Դասընթացի խնդիրներն են.

- ձևավորել սոցիալական մանկավարժության որպես ինքնուրույն գիտական դիսցիպլինի, նրա ուսումնասիրության օբյեկտի, առարկայի, հիմնական կատեգորիաների, սոցիալ-մանկավարժական գործունեության մեթոդաբանական հիմքերի մասին տեսական գիտելիքներ,
- ձևավորել ամբողջական պատկերացում տարբեր սոցիալ-մշակութային հանրույթներում երեխայի սոցիալականացման մեխանիզմների, գործոնների և օրինաչափությունների մասին,
- բացահայտել սոցիալ-մանկավարժական գործունեության և նրա մարդասիրական բնույթի յուրահատկությունը,
- զինել երեխաների տարբեր կատեգորիաների հետ սոցիալ-մանկավարժական գործունեության ձևերի և մեթոդների, տեխնոլոգիաների, կիրառման կարողություններով, հմտություններով, հնարներով,
- ձևավորել ուսանողների մոտ սոցիալ-մանկավարժական հետազոտությունների գիտելիքներ, կարողություններ, հմտություններ:
- Սովորեցնել «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության տեսական հիմքերը:
- Բացատրել «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության օրինաչափությունները:

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով:
- Սովորեցնել ուսանողներին կատարել «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության հետազոտություններ և կատարել եզրահանգումներ ըստ արդյունքների:
- Սովորեցնել ուսանողներին վերլուծել «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության առանձնահատկությունները սոցիալականացման համատեքստում:

## 3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/

- ընդհանուր հումանիտար և սոցիալ- տնտեսագիտական,
- մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական,
- ընդհանուր մասնագիտական,
- հատուկ մասնագիտական,

«Սոցիալական մանկավարժության» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների սոցիալ-մանկավարժական գիտելիքների, սոցիալ-մանկավարժական հմտությունների առկայությունը:

## 4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2] և /կամ կոմպետենցիաները.

«Սոցիալական մանկավարժության» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. իմանա «Սոցիալական մանկավարժության» տեսական հիմունքները,
2. իմանա «Սոցիալական մանկավարժության» ուսումնասիրման մեթոդական հիմքները
3. կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
4. տիրապետի «Սոցիալական մանկավարժության» հետազոտության մեթոդներին,
5. կարողանա «Սոցիալական մանկավարժության» չափանիշների …………
6. կարողանա «Սոցիալական մանկավարժության» մասնագիտության շրջանակներում կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

**Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.**

### 1. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ

**<u>ա/Գործիքային կոմպետենտություն /ԳԿ/</u>**

Գործիքային կոմպետենցիաները ներառում են.

- կազմակերպչական աշխատանք կատարելու և ղեկավար դեր ստանձնելու կարողություն ***/ԳԿ-1/,***

---

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

- հենքային ընդհանուր գիտելիքների տիրապետում */ԳԿ-2/,*
- պետական լեզվով գրավոր և բանավոր հաղորդակցման կարողություն */ԳԿ-3/,*
- օտար լեզվի տիրապետում */ԳԿ-4/,*
- համակարգչից և տեղեկատվական տեխնոլոգիաներից ինքնուրույն օգտվելու կարողություն */ԳԿ-5/,*
- ստացված տեղեկատվությունը մշակելու, վերլուծելու, տեղին կիրառելու կարողություն */ԳԿ-6/,*
- խնդիրներ լուծելու և որոշումներ կայացնելու կարողություն */ԳԿ-7/:*

բ/<u>Սոցիալանձնային և համընդհանուր - մշակութային կոմպետենտություն /ՍԱՀՄԿ/</u>

Սոցիալ-անձնային և համընդհանուր - մշակութային կոմպետենցիաները ներառում են.

- փոխհամագործակցության, հանդուրժողականության, հասարակական և մասնագիտական ոլորտներում կոնֆլիկտների լուծման, սոցիալական դյուրաշարժության կարողություններ */ՍԱՀՄԿ -1/,*
- հոգեբանական և փիլիսոփայական, աշխարհայացքային, ինչպես նաև անհատական բնույթի հիմնախնդիրներ հասկանալու կարողություններ */ՍԱՀՄԿ -2/,*
- սոցիալական և մշակութային տարբերությունների հանդուրժողական ընկալման, պատմական ժառանգության, մշակութային ավանդույթների նկատմամբ հոգատարության հանձնառության կարողություն */ՍԱՀՄԿ-3/,*
- սոցիալական արժեք ունեցող քաղաքական իրադարձությունները և դեպքերը վերլուծելու, մասնագիտական և հասարակական գործունեության մեջ սոցիոլոգիական գիտելիքները կիրառելու կարողություն */ՍԱՀՄԿ-4/,*
- պատմական գործընթացում շարժիչ ուժերի և օրինաչափությունների, հասարակական-քաղաքական ոլորտում մարդու դերն ըմբռնելու կարողություն */ՍԱՀՄԿ-5/,*
- հասարակական գործընթացները և տնտեսական հիմնախնդիրները տեսնելու, հասկանալու և վերլուծելու, ակտիվ սուբյեկտի դեր ստանձնելու կարողություն */ՍԱՀՄԿ -6/,*
- քաղաքացու իրավունքները պաշտպանելու, ազատ և պատասխանատու վարք դրսևորելու կարողություն */ՍԱՀՄԿ-7/,*
- միջազգային համատեքստում աշխատելու ընդունակություն */ՍԱՀՄԿ-8/,*
- առողջական խնդիրներ, մարմնական-հոգեբանական սահմանափակ կարողություն ունեցող անձանց և նրանց կարիքներն ընկալելու, պատշաճ վարվելակերպ դրսևորելու կարողություն */ՍԱՀՄԿ-9/:*

գ/<u>Միջանձնային կոմպետենտություն /ՄՋԿ/</u>

Միջանձնային կոմպետենտությունները ներառում են.

- քննադատության և ինքնաքննադատության կարողություն ***/ՄՁԿ-1/,***
- միջանձնային գործնական հմտություններ ***/ՄՁԿ-2/,***
- թիմային աշխատանքի կարողություն ***/ՄՁԿ-3/,***
- բարոյական պատասխանատվության կարողություն ***/ՄՁԿ-4/:***

***դ/ Համակարգային կոմպետենտություն /ՀԳԿ/***

Համակարգային կոմպետենցիաները ներառում են.

- նոր գիտելիքներ ձեռք բերելու և շարունակական կրթության հետամուտ լինելու կարողություն ***/ՀԳԿ-1/,***
- գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն ***/ՀԳԿ-2/,***
- հետազոտական կարողություն ***/ՀԳԿ-3/,***
- ուսումնառության կարողություն ***/ՀԳԿ-4/,***
- նոր իրավիճակներին հարմարվելու կարողություն ***/ՀԳԿ-5/,***
- ինքնուրույն աշխատելու կարողություն ***/ՀԳԿ-6/,***

***ե/ Առարկայական /մասնագիտական/ կոմպետենտություններ /այսուհետև՝ ԱԿ/.***

- իմանա հայ ժողովրդի պատմությունը և արդի քաղաքագիտական զարգացումները ***/ԱԿ -1/,***
- ծանոթ լինի ժամանակակից բնագիտության հիմնական սկզբունքներին և հայեցակարգերին, բնապահպանական գլոբալ և տարածքային հիմնախնդիրներին ***/ԱԿ -2/,***
- տիրապետի տեղեկատվության հավաքման, պահպանման և մշակման համակարգչային մեթոդներին և կարողանա օգտագործել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ ***/ԱԿ -3/,***

***Մասնագիտական - գործնական***

- տիպային և ոչ ստանդարտ հոգեբանամանկավարժական ու մեթոդական խնդիրներ լուծելու կարողություն ***/ԱԿ -4/,***
- երկարօրյա խմբերում ուսումնադաստիարակչական աշխատանքներ իրականացնելու կարողություն***/ԱԿ -5/,***
- խորհրդատվական կարողություն ***/ԱԿ -6/,***
- մասնագիտական ոլորտում համացանցի /ինտերնետի/ օգտագործման կարողություն ***/ԱԿ -7/ ,***
- մասնագիտական կատարելագործման անհրաժեշտության գիտակցում ***/ԱԿ -8/,***

- ➢ խմբում յուրաքանչյուր երեխայի և մանկական կոլեկտիվի զարգացման, դաստիարակվածության, կրթվածության իրական մակարդակի վերլուծման և գնահատման կարողություններ ***/ԱԿ-9/,***
- ➢ մանկավարժական իրավիճակներն ու գործընթացները ըմբռնելու և օբյեկտիվ գնահատելու կարողություն ***/ԱԿ-10/:***

***գ/ Սոցիալ-անձնային /ՍԱՄ/***

- Սեփական անձի ինտելեկտուալ, սոցիալ-մշակութային, բարոյական և ֆիզիկական կատարելագործման ձգտում /ՍԱՄ-1/
- Հետազոտական նոր մեթոդների տիրապետման ունակություն, իր մասնագիտական, գիտական ուղղվածության, գործունեության սոցիալ-մշակութային և սոցիալական պայմանների փոփոխությունների պատրաստություն /ՍԱՄ-2/
- Գործունեության գիտական, հոգեբանամանկավարժական և սոցիալական ոլորտներում ակտիվ հաղորդակցման պատրաստություն /ՍԱՄ-3/
- Ազատ տիրապետի մայրենի և օտար լեզուների՝ որպես գործնական հաղորդակցման միջոցների: Ակտիվ սոցիալական շարժունության ունակություն /ՍԱՄ-4
- Պրակտիկայում գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման կարողությունների և հմտությունների կիրառման, կոլեկտիվի կառավարման, աշխատանքային խմբի նպատակների ձևավորման, գործունեության նպատակներին համապատասխան սոցիալ-հոգեբանական մթնոլորտի վրա ազդելու, գործունեության արդյունքների որակի գնահատման ունակություններ /ՍԱՄ-5/
- Մասնագիտական կոմպետենցիաների շրջանակներում սեփական որոշումներ ընդունելու պատասխանատվության պատրաստություն, անսովոր պայմաններում որոշումներ ընդունելու, խնդրահարույց իրադրությունների կարգավորման ունակություններ /ՍԱՄ-6/
- Նոր իրադրություններին հարմարվելու, կուտակած փորձի վերարժեվորման, սեփական հնարավորությունների վերլուծության ունակություններ /ՍԱՄ-7/
- Առողջ կենսակերպի նորմերի պահպանման իմաստով սեփական օրինակով շրջապատողների վրա դրական ազդեցություն ունենալու կարողություն /ՍԱՄ-8/
- Բարդ, այդ թվում և ռիսկային իրադրություններում նախաձեռնություն ցուցաբերելու, լիարժեք պատասխանատվություն ստանձնելու կարողություն /ՍԱՄ-9/

***ե) Սոցիալ-մանկավարժական գործունեության ոլորտում. /ՄԿ-ՍՄԳ/***

- Կրթադաստիարակչական հիմնարկներում սոցիալական դաստիարակության գործընթացի կազմակերպման և կառավարման կարողություն: /ՄԿ-ՍՄԳ-1/

- Կրթական գործընթացի սոցիալ-մանկավարժական ապահովման մոդելավորման և իրականացման պատրաստականություն: /ՄԿ-ՍՄԳ-2/
- Ռիսկային համարվող խմբերում ընդգրկված երեխաների և մեծահասակների հետ սոցիալ-մանկավարժական աշխատանքների իրականացման կարողություն: /ՄԿ-ՍՄԳ-3/
- Սոցիալ-մանկավարժական կանխարգելիչ, ախտորոշող-կանխատեսողական, վերականգնողական և շտկողական աշխատանքների իրականացման կարողություն: /ՄԿ-ՍՄԳ-4/
- Սոցիալական տարբեր ինստիտուտների, հասարակական կազմակերպությունների և սոցիալական ծառայությունների հետ սոցիալ-մանկավարժական համագործակցության իրականացման պատրաստականություն: /ՄԿ-ՍՄԳ-5/
- ՈՒսուցման և դաստիարակության գործընթացում սոցիալ-մանկավարժական կանխարգելման ուղղությամբ աշխատանքներ իրականացնելու կարողություն: /ՄԿ-ՍՄԳ-6/
- Սոցիալ-մանկավարժական նախաձեռնող գործունեության իրականացման կարողություն սոցիալական քաղաքականության ոլորտում: /ՄԿ-ՍՄԳ-7/
- Սոցիալ-մանկավարժական խորհրդատվության իրականացման կարողություն: /ՄԿ-ՍՄԳ-8/
- Սոցիալ-մանկավարժական գիտամեթոդական, գիտահետազոտական աշխատանքների իրականացման կարողություն /ՄԿ-ՍՄԳ-9/:

***ը) Ընդհանուր գիտական կոմպետենցիաներ /ԸԳԿ/***

- Բակալավրիատական ծրագրի հիմնարար և կիրառական դիսցիպլինների գիտելիքների արտահայտման կարողություն /ԸԳԿ-1/.
- Տեսական և պրակտիկ խորացված գիտելիքների օգտագործման ունակություն /ԸԳԿ-2/
- Պրակտիկ գործունեության ընթացքում ինֆորմացիոն տեխնոլոգիաների միջոցով գիտելիքների և կարողությունների, այդ թվում և գիտության նոր, իր գործունեության հետ անմիջականորեն չկապվող բնագավառների գիտելիքների և կարողությունների ինքնուրույն ձեռքբերումը և սեփական գիտական աշխարհայացքի ընդլայնումը /ԸԳԿ-3/
- Մասնագիտական գործունեության արդյունքների գնահատման և սոցիալական արժեք ներկայացնող ծրագրերի իրականացման ժամանակ իրավական և էթիկական նորմերի մասին խորացված գիտելիքների օգտագործում /ԸԳԿ-4/:

- Գիտական կոլեկտիվում նոր գաղափարներ առաջ քաշելու և աշխատանքային հմտություններ դրսևորելու կարողություն /ԸԳԿ-5/
- Հետազոտության ժամանակակից մեթոդների մասին գիտելիքների կիրառման ընդունակությունն ու պատրաստությունը /ԸԳԿ-6/:
- Գիտափորձեր կատարելու, տվյալներ մշակելու, արդյունքների ձևակերպման կարողություն /ԸԳԿ-7/:
- Ինֆորմացիայի վերլուծության, համադրության և քննադատաբար ամփոփման կարողություն /ԸԳԿ-8/:
- Ժամանակակից փորձասարքերի և գործիքների մասնագիտական շահագործման ունակություններ՝ մասնագիտական ծրագրերի նպատակներին համապատասխան /ԸԳԿ-9/:

_**թ) Մշակութալուսավորական գործունեության ոլորտում. /ՄԿ-ՄԼԳ/**_

- Կրթական հաստատության մշակութային մթնոլորտի ձևավորման և զարգացման պատրաստականություն: /ՄԿ-ՄԼԳ-1/
- Կրթական հաստատության, ընտանիքի, համայնքի, քաղաքի, մարզի տարբեր սոցիալական կառույցների սոցիալ-մշակութային ներուժի գնահատման և օգտագործման կարողություն: / ՄԿ-ՄԼԳ-2/

2.ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ

- _**Ա) Մասնագիտական. /ՄԿ/**_

_**ՈՒսումնա-դաստիարակչական գործունեության ոլորտում./ՄԿ-ՈՒԴԳ/**_

- Մասնագիտական խնդիրների լուծման նպատակով բազային հոգեբանա-մանկավարժական տեսական գիտելիքների օգտագործման կարողություն՝ հենվելով սովորողների անձի զարգացման, ուսուցման և դաստիարակության գործընթացների ինտեգրման վրա: /ՄԿ-ՈՒԴԳ-1/
- Անձնակողմնորոշիչ մոտեցման հիման վրա սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացի ու նրանց արժեքային կողմնորոշումների և հայրենասիրական համոզմունքների ձևավորման գործընթացի համատեղման կարողություն: ./ՄԿ-ՈՒԴԳ-2/
- Կրթադաստիարակչական աշխատանքի ժամանակակից ձևերի, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների, մեթոդների և միջոցների (այդ թվում նաև տեխնիկական, տեղեկատվական), օգտագործման պատրաստականություն: ./ՄԿ-ՈՒԴԳ-3/

*բ)Կազմակերպչական գործունեության ոլորտում /ՄԿ-ԿԿԳ/*

- Կազմակերպչական և սոցիալ-մանկավարժական հիմնախնդիրների լուծմանը նպաստող մեթոդների ընտրության, արդյունքների գնահատման և հաշվետվությունների պատրաստման կարողություն: /ՄԿ-ԿԿԳ-1/
- Մասնագիտական գործունեության ոլորտի խնդիրների լուծման նպատակով հասարակական և կրթական կազմակերպությունների, սոցիալական ծառայությունների, մանկատների, ոստիկանության, մանկական կոլեկտիվների և ծնողների հետ փոխհամագործակցության կարողություն: /ՄԿ-ԿԿԳ-2/
- Մասնագիտական գործունեության ոլորտում նորարարական որոշումների իրագործման պատրաստականություն: /ՄԿ-ԿԿԳ-3/:

5. **Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3].**

«Սոցիալական մանկավարժություն» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել «Սոցիալական մանկավարժության» մասնագիտական գործունեության ընթացքում, նաև մագիստրատուրայում, ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և «Սոցիալական մանկավարժության» մասնագիտական բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

ԲԱԿԱԼԱՎՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

***5.1. Մասնագիտական գործունեության բնագավառներ.*** հիմնական, ավագ և միջնակարգ դպրոցներ, միջին մասնագիտական հաստատություններ, բարձրագույն մասնագիտական կրթության, սոցիալ-հոգեբանամանկավարժական ծառայություններ, երեխաների և ընտանիքների ցերեկային աջակցության կենտրոն, խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ, ծերանոցներ, համայնքային ծառայություներ, կազմակերպություններ, հասարակական ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և գերատեսչական փաստաթղթերով նախատեսված կառույցները:

***5.2. Մասնագիտական գործունեության օբյեկտներ.*** սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման սոցիալ-մանկավարժական գործընթացները:

***5.3. Մասնագիտական գործունեության տեսակներն են.*** ուսումնադաստիարակչական, մեթոդական, սոցիալ-մանկավարժական, կազմակերպական:

***5.4. Մասնագիտական գործունեության բնագավառում են.***

---
[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

- *Սոցիալական-մանկավարժական գործունեության բնագավառում*

ա) Սոցիալական դաստիարակության կազմակերպում տարբեր տիպի դաստիարակչական կազմակերպություններում:

բ) Կրթական գործընթացի սոցիալ-մանկավարժական ապահովման մոդելավորում և իրականացում:

գ) Ռիսկի խմբի երեխաների հետ սոցիալ-մանկավարժական փոխներգործության իրականացում տարբեր սոցիալ-մանկավարժական իրադրություններում տարբեր սոցիալական ինստիտուտների հետ համատեղ:

դ) Սոցիալ-մանկավարժական կանխարգելման աշխատանքների իրականացում՝ ուսուցման և դաստիարակության գործընթացում:

ե) Սոցիալ-մանկավարժական վերականգնողական, շտկողական աշխատանքների իրականացում ռիսկի խմբի երեխաների հետ:

զ) Աշակերտների սոցիալականացման, մասնագիտական կողմնորոշման գործընթացների մանկավարժական և հոգեբանական ուղեկցության իրականացում, նրանց նախապատրաստում մասնագիտության գիտակցված ընտրության՝ ընդունակություններին և հակումներին համապատասխան:

է) Միջկոլեկտիվային և երեխաների միջանձնային հարաբերությունների կազմակերպում, կանոնավորում ու զարգացում:

Դաստիարակության գործընթացում սովորողների ծնողների, ինչպես նաև սոցիալական հաստատությունների հետ համագործակցում:

- *Ուսումնադաստիարակչական բնագավառում.*

ա) Հանրակրթական դպրոցում ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացների իրականացում:

բ) Գիտականորեն հիմնավորված ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների և միջոցների (տեսալսողական, հաղորդակցական, տեղեկատվական և մուլտիմեդիական) օգտագործում:

գ) Ըստ ուսումնական առարկաների ուսուցման արդյունքների պլանավորում, կանխատեսում, աշակերտների ուսումնական ձեռքբերումների վերահսկում և

հաշվառում՝ արդյունքների գնահատման ժամանակակից մեթոդների և միջոցների կիրառմամբ:

դ) Աշակերտների ինքնուրույն ուսումնառության պլանավորում, կազմակերպում, ուղղորդում և վերահսկում:

ե) Աշակերտների արժեքային ուղղորդվածության, հանդուրժողականության, քաղաքացիական, մարդասիրական և հայրենասիրական համոզմունքների ձևավորում:

զ) Մասնագիտական - մանկավարժական գործունեության մեջ կրթական, դաստիարակչա-կան և զարգացման նպատակների իրականացմանը նպաստող կրթական և հոգեբանական միջավայրի ստեղծում և պահպանում: Աշակերտների անատոմիական-ֆիզիոլոգիական ու հոգեկան, մտավոր, ֆիզիկական, բարոյական, գեղագիտական, աշխատանքային դաստիաչակության պայմանների ապահովում և հիմնական օրինաչափությունների ու աշակերտների տարիքային, անհատական առանձնահատկությունների հաշվառում:

- ***Մեթոդական գործունեության բնագավառում***

ա) Մասնագիտական գործունեության ոլորտի տեղեկատվության հավաքում, համակարգում, մշակում, վերլուծում և օգտագործում:

բ) Կրթական ծրագրի ուսումնամեթոդական ապահովման հիմնավորված ընտրություն և դրանց ուղղորդում ուսումնական կոնկրետ գործընթացին:

գ) Ուսումնական պլանին համապատասխան՝ ըստ առարկաների ուսումնական պարապմունքների պլանավորում՝ առարկայական ծրագրերի թեմաների և բաժինների առանձնահատկությունների հաշվառմամբ:

դ) Փորձարարական-հետազոտական գործունեության իրականացում՝ կապված աշակերտների ուսուցման, դաստիարակության, զարգացման, դրանց առանձնահատկությունների ուսումնասիրության, նրանց անձի ձևավորման, աշակերտների գործունեության խթանման, ինչպես նաև տեսական ու գործնական մանկավարժական (կազմակերպչական, շտկողական, դիագնոստիկ, մեթոդական) խնդիրների հետ:

ե) Գրել հաշվետվություններ, մեթոդական զեկուցումներ, հոդվածներ:

գ) Ուսումնական և արտադասարանական, ինչպես նաև արտադպրոցական մանկավարժական գործունեության՝ պլանավորում, կազմակերպում, իրականացում վերլուծություն և կատարելագործում:

- *Մշակութային – լուսավորական գործունեության բնագավառում*

ա) Աշակերտների ընդհանուր մշակույթի ձևավորում:

բ) Ուսումնական հաստատությունների սոցիալական և մշակութային տարածության կազմակերպում:

- *Կազմակերպչական գործունեության բնագավառում*

ա) Աշակերտների ուսումնական և արտաուսումնական գործունեության կազմակերպում, ղեկավարում և դրանց արդյունքների ամփոփում և գնահատում:

բ) Ուսումնական գործընթացում աշակերտների առողջության և անվտանգության ապահովում:

գ) Մասնագիտական խնդիրների լուծման համար հասարակական և կրթական կազմակերպությունների հետ սովորողների և ծնողների կոլեկտիվների փոխհամագործակցության կազմակերպում:

դ) Ուսումնական հաստատության փաստաթղթավարության, փաստաթղթաշրջանառության իրականացում

ե) Սովորողների կոլեկտիվի գործունեության կազմակերպում:

## 6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

| Չափանիշ | Առկա ուսուցման համակարգ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | 5 կրեդիտ/150 ժամ | |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ | ժամաքանակ |
|---|---|---|
| Դասախոսություն | 30-/1-ին կուրս, 2-րդ կիսամյակ/<br>30-/2-րդ կուրս, 1-ին կիսամյակ/ | |
| Գործնական աշխատանք | 40--/1-ին կուրս, 2-րդ կիսամյակ/<br>40--/2-րդ կուրս, 1- | |

| | | |
|---|---|---|
| | ին կիսամյակ/ | |
| Սեմինար պարապմունք | - | |
| Լաբորատոր աշխատանք | - | |
| Ինքնուրույն աշխատանք | 80-/1-ին կուրս, 2-րդ կիսամյակ/<br>80--/2-րդ կուրս, 1-ին կիսամյակ/ | |
| **Ընդամենը** | | |
| Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն) | քննություն | |

7. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u>[4] .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- **Սեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Սեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

---

[4] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

Սեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակությանհարցադրումների և պատասխանների մասին:

- **Լաբորատոր աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսություն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդոլոգիան:
  Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրակացություն
- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:
  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝
  - **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - **Գործարար խաղեր** – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
  - **Էսսե** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
  - **Կլոր սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
  - **Կոնկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
  - **Նախագծերի մեթոդ** – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
  - **Հարցի նախապատրաստման մոդել** –կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:
  - **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները

[5] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:

- Աշխատանքային տետր – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
- Զեկույց – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
- Հարցազրույց – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝**[6] հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր….

9. **Ուսումնառության մեթոդներն են**[7]՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում….

---

[6] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:
[7] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[8].

| հ/հ | Թեմա<br>**011301.03.6-«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ»**<br>Առկա/հեռակա | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար պարապմունք | գործնական աշխատանք | լաբորատոր աշխատանք | Ինքնուրույն աշխատանք |
| | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ | | | | | |
| 1. | Սոցիալական մանկավարժությունը որպես գիտություն. օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը:<br>1.1. *Սոցիալական մանկավարժության խնդիրները:*<br>1.2. *Սոցիալական մանկավարժության գործառույթները:* | *2* | | *2* | | |
| 2. | Սոցիալական մանկավարժությունը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում. կապն այլ գիտությունների հետ:<br>*2.1. ՔՆՆԱՐԿՈՒՄ*<br>*Լսարանում անցկացրե՛ք քննարկում՝ «Ինչի՞ն են նպաստում մարդուն ուսումնասիրող տարբեր գիտությունների կապն ու փոխգործակցությունը» թեմայով՝ ուշադրություն դարձնելով և մեկնաբանելով, թե դրանցից որոնք են ուղղակիորեն ուսումնասիրում մարդուն, իսկ որոնք՝ անուղղակիորեն:* | *2* | | *2* | | |
| 3. | Սոցիալական մանկավարժության հիմնական հասկացությունները:<br>*3.1.Մարդու սոցիալականացման տարիքային փուլերը:* | *2* | | *2* | | |
| 4. | Սոցիալական մանկավարժության սկզբունքները:<br>4.1. *Երեխայի սոցիալականացման հիմնական ինստիտուտները:*<br>*4.2.Սոցիալական ինստիտուտների դերը երեխայի սոցիալականացման գործընթացում:* | *2* | | *4* | | |
| 5. | Սոցիալական մանկավարժության գործառույթները:<br>*5.1. Մանկավարժահոգեբանական աջակցման ծառայությունների նկարագիրը կրթության* | *2* | | | | |

[8] Նման է օրացուցային պլանին

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *կազմակերպման գործընթացում:*<br>*/Սոցիալական մանկավարժի կողմից հանրակրթական դպրոցում իրականացվող ծառայության նկարագիրը/:*<br>***5.2.** Սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները հատուկ և այլընտրանքային խնամքի հաստատություններում:* | | | *4* | | |
| 6. | Սոցիալական մանկավարժության մեթոդները:<br>6.1. *Ակումբների դերը երեխաների և դեռահասների սոցիալականացման գործընթացում:*<br><br>6.2.*Հասկացություն մանկական և երիտասարդական հասարակական շարժման մասին. ժամանակակից մանկական միավորումների տեսակները և գործառույթները:*<br><br>***6.3.** Ոչ ֆորմալ երիտասարդական միավորումները:* | ***2*** | | ***2*** | | |
| 7. | 7. «Նորմեր» և «շեղում նորմերից» հասկացությունները սոցիալական մանկավարժության մեջ:<br>***7. 1.** ՊԱՏՐԱՍՏԵՔ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐ*<br><br>*Լսարանը բաժանե՛ք չորս խմբի, և յուրաքանչյուր խումբ թո՛ղ ուսումնասիրի նորմից շեղման մի տեսակ՝ ուշադրությունը բևեռելով այդ շեղումը ծնող պատճառների և լուծման եղանակների վրա: Այնուհետև չորս խմբին էլ թո՛ղ իրենց ուսումնասիրությունները ներկայացնեն լսարանին զեկուցմամբ:* | ***2*** | | ***2*** | | |
| | ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ. ՄԱՐԴՈՒ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ<br>ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ | | | | | |
| 8. | Սոցիալականացումը որպես սոցիալական մանկավարժության գլխավոր հիմնախնդիր:<br>ՔՆՆԱԿՈՒՄ<br>***8.1.***<br>**1. Լսարանում կազմակերպե՛ք քննարկում՝ «Սոցիալականացումը որպես սոցիալական մանկավարժության գլխավոր հիմնախնդիր» թեմայով:**<br>**2. Լսարանում կազմակերպե՛ք «Մանկավարժական գործընթացի և սոցիալականացման հարաբերակցությունը» թեմայով բանավեճ:**<br>**3. Պատրաստե՛ք ցուցադրություններ՝ հիմնավորելով «Սոցիալականացումը երևույթ», «Սոցիալականացումը գործընթաց», «Սոցիալականացումը մարդու ինքնաիրացման մեխանիզմ» թեմաներով:** | ***2*** | | ***4*** | | |
| 9. | Սոցիալականացման գործոնները.<br>*Կենսաբանական գործոններ*<br>*Սոցիալական գործոններ*<br>***9.1.** Սոցիալականացման վրա ազդող մեզագործոնները, միկրոգործոնները:* | ***4*** | | ***4***<br><br>***4*** | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 10. | . Սոցիալականացման փուլերը: | *2* | | | | |
| 11. | Սոցիալականացման փուլերն ըստ մարդու աշխատունակության:<br>*11.1. Սոցիալականացման փուլերի դասակարգման սկզբունքները:*<br>*11.2. Սոցիալականացման փուլերի առանձնահատկությունները:*<br>*11.3. Սոցիալականացման յուրաքանչյուր փուլում խթանող և խոչընդոտող գործոնները:*<br>*11.4. Բնութագրե՛ք գործունեության տեսակները:* | *4* | | *4* | | |
| 12. | Մարդը սոցիալականացման գործընթացում:<br>*12.1.Ընտանեկան դաստիարակություն, սխալները և սոցիալական մանկավարժի աշխատանքն ընտանիքի հետ:*<br>**Ինքնուրույն աշխատանք**<br>**1. Գրե՛ք զեկուցումներ և պատրաստե՛ք սահիկների ցուցադրություն լսարանում՝ «Մարդու սեռադերային, մշակութային սոցիալականացում» թեմայով:**<br>**2. Գրե՛ք զեկուցում՝ «Մարդկանց զոհ դառնալու» թեմայով:** | *2* | | *4* | | |
| 13. | Սոցիալականացման մեխանիզմները;<br>*13.1. Սոցիալականացվածության դրսևորումները* | *2* | | *2* | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | *30* | - | *40* | - | *80* |
| | *2-րդ կուրս, առաջին կիսամյակ* | | | | | |
| | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | | | | | |
| 1. | «Սոցիալական մանկավարժ» մասնագիտության բնութագիրը:<br>*1.1.Սոցիալական մանկավարժի մասնագիտության անհրաժեշտությունը հասարակության զարգացման տեսանկյունից:*<br>*1.2.Ինչպիսի՞ գործունեություն կարող է ծավալել սոցիալական մանկավարժը կրթադաստիարակչական հաստատություններում:*<br>*ՔՆՆԱՐԿՈՒՄ*<br><br>*Հիմնավորե՛ք սոցիալական մանկավարժի մասնագիտության անհրաժեշտությունը հասարակության զարգացման տեսանկյունից:* | *4* | | *4* | | |
| 2. | Սոցիալ-մանկավարժական գործընթացի էությունն ու բովանդակությունը:<br>2.1. *Սոցիալ-մանկավարժական գործընթաց, հարմարում, մշտադիտարկում (մոնիթորինգ), մանկավարժական պայմաններ:*<br>*2.2. ՔՆՆԱՐԿՈՒՄ*<br>*Լսարանը բաժանե՛ք խմբերի և քննարկե՛ք ու ներկայացրե՛ք սոցիալ-մանկավարժական* | *2* | | *2* | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *գործընթացի երեք փուլերն ու դրանց ենթափուլերը:* | | | | | |
| 3. | Սոցիալական մանկավարժի մասնագիտական որակներն ու պաշտոնային պարտականությունները:<br>3.1. *Սոցիալական մանկավարժի, հոգեբանի, իրավաբանի և բժշկի մասնագիտական էթիկայի մի քանի հարցեր, դրանց ընդհանրություններն ու տարբերությունները:* | *2* | | 2 | | |
| 4. | Սոցիալական մանկավարժի գործառույթները և դերերը:<br>*4.1.Սոցիալական մանկավարժի մասնագիտական էթիկայի չափանիշները, նորմերը:*<br>*4.2.Սոցիալական մանկավարժի գործառույթները:*<br>/Սոցիալական դեր, սոցիալական ինստիտուտ, արժեհամակարգ, գործառույթ, հոգեկան առողջություն, իրավաբանական օգնություն/: | *2* | | 4 | | |
| 5. | Ուսումնական հաստատություն-ՏՄԱԿ համագործակցությունը մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման համատեքստում:<br>5.1.*Մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների գործունեության էթիկական սկզբունքները:*<br>*5.2. Մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների կողմից հանրակրթական դպրոցում իրականացվող ծառայությունների նկարագրերը:* | *4* | | 4 | | |
| 6. | Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկան և տեխնոլոգիաները:<br>Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան և աջակցող տեխնոլոգիան:<br>*6.1. Մեթոդ, մեթոդիկա, մեթոդաբանություն, տեխնոլոգիա, սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիա, ալգորիթմ, համակարգ:*<br>*6.2. ՔՆՆԱՐԿՈՒՄ*<br>*Խմբային աշխատանքի միջոցով փորձե՛ք մշակել սոցիալական մանկավարժի աշխատանքի տեխնոլոգիաներ՝ ըստ սոցիալ-մանկավարժական գործունեության ոլորտի, օբյեկտի, սուբյեկտի առանձնահատկությունների: Ներկայացրե՛ք այդ աշխատանքում կիրառվող մեթոդները, միջոցները, հնարներն ու ձևերը:* | *4* | | 4 | | |
| 7. | Սոցիալական մանկավարժի գործունեության ոլորտները:<br>*7.1.Սոցիալական մանկավարժի աշխատանքը դեռահասների և պատանիների հետ:*<br>*ՔՆՆԱՐԿՈՒՄ 1. Բաժանվե՛ք խմբերի, յուրաքանչյուր խմբում, ըստ նախապես ընտրված գործունեության ոլորտի, ներկայացրե՛ք այդ ոլորտի (կառույցի) գործունեության նշանակությունը հասարակության մեջ, այդ կառույցներում սոցիալական մանկավարժի տեղն ու դերը: Ներկայացրե՛ք սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկություններն այդ ոլորտներում:* | *2* | | 2 | | |
| 8. | Սոցիալական մանկավարժի աշխատանքն ընտանիքի հետ:<br>*8.1.Ընտանիքը որպես սոցիալականացման ինստիտուտ և ընտանիքի հետ սոցիալ-մանկավարժական աշխատանքի առանձնահատկությունները:* | *2* | | 4 | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *ՔՆՆԱՐԿՈՒՄ*<br><br>*1.Քննարկե՛ք լսարանում այն հիմնախնդիրները, որոնք այսօր առկա են հայ ընտանիքներում, և որոնք ստեղծում են խնդիրներ հատկապես երեխաների համար:*<br><br>*2. Քննարկե՛ք լսարանում երեխաների հետ կապված այն խնդիրները, որոնք կարող են առաջանալ ընտանիքի տարբեր կենսափուլերում:* | | | | | |
| 9. | Սոցիալական մանկավարժի աշխատանքը Վանաձորի ՏՄԱԿ-ի բազմամասնագիտական թիմում և համագործակցությունը հանրակրթական դպրոցների հետ:<br>*9.1. Կրթության կազմակերպման գործընթացում կիրառվող աջակցող տեխնոլոգիաները:*<br><br>*Աջակցող տեխնոլոգիաներ շարժունակության, տեսողության, լսողության և հաղորդակցման դժվարություններ ունեցող անձանց համար*<br><br>*/Սոցիալական մանկավարժի գործառույթները դպրոցական համակարգում/:*<br><br>*ՔՆՆԱՐԿՈՒՄ*<br><br>*1. Լսարանում կազմակերպե՛ք հետևյալ թեմայի քննարկումը՝ «Ինչպե՞ս կհիմնավորե՛ք սոցիալական մանկավարժի գործունեության անհրաժեշտությունը դպրոցում»:*<br><br>*2. Ներկայացրե՛ք սոցիալական մանկավարժի աշխատանքը արտադպրոցական միկրոմիջավայրում:* | *2* | | *4* | | |
| 10. | ԸՆՏԱՆԻՔ - ԴՊՐՈՑ - ՀԱՄԱՅՆՔ համագործակցությունը:<br>*10.1.Սոցիալական մանկավարժի աշխատանքը հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ:* | *2* | | *2* | | |
| 11. | Սոցիալական մանկավարժի աշխատանքը սահմանափակ կարողություններով երեխաների հետ:<br>*11.1.Ներառական ուսուցումը որպես զարգացման հատուկ կարիքներ ունեցող երեխաների ինտեգրման միջոց:*<br>*ՔՆՆԱՐԿՈՒՄ*<br>*1. Լսարանում քննարկե՛ք այն հնարավոր խնդիրները, որոնք ի հայտ են գալիս տարրական դպրոցի ներառական ուսուցման գործընթացում: Ինչպե՞ս հաղթահարել դրանք, պարզաբանե՛ք սոցիալական մանկավարժի հնարավոր մասնակցությունն այդ գործընթացում:*<br>*2.Ներկայացրե՛ք սոցիալական մանկավարժի աշխատանքը Վանաձորի ՏՄԱԿ-ի բազմամասնագիտական թիմում, առանձնացրե՛ք այն կառույցները, որոնք կարող են համագործակցել այդ թիմի հետ:*<br>*Կազմե՛ք սխեմա:*<br>*3.Ներկայացրե՛ք հաշմանդամություն ունեցող հանրահայտ մարդկանց (պետական գործիչներ, գիտնականներ, երաժիշտներ, գրողներ, նկարիչներ) կյանքն ու գործունեությունը, քննարկե՛ք* | *2* | | *4* | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *հաշմանդամության դերն ու ազդեցությունը նրանց կյանքում:* | | | | | |
| 12. | Սոցիալական մանկավարժի աշխատանքն օժտված երեխաների հետ:<br>*12.1.Օժտված երեխան դպրոցում և ընտանիքում:*<br><br>*12.2. «Ռիսկի խմբի» ընտանիքների էությունը և նրանց առանձնատատկությունները:* | *2* | | *4* | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | *30* | | *40* | - | *80* |

## 11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|
| **Պարտադիր գրականություն (ՊԳ)** | | |
| 1. | Հարությունյան Ն. Կ., Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ. Հ. Սոցիալական մանկավարժություն (Բուհական ձեռնարկ): | Երևան<br>ԵՊՀ Հրատարակչություն<br>2017: |
| 2. | Երեխաների պաշտպանության համակարգը Հայաստանում, Տեղեկագիրք: | Եր., 2009: |
| 3. | Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում: Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար: | Եր., 2003: |
| 4. | Կոնվենցիա երեխայի իրավունքների մասին: Ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1989 թ. նոյեմբերի 20-ի 44/25 բանաձևով և ուժի մեջ է մտել 1990 թ. սեպտեմբերի 2-ին՝ համաձայն 49-րդ հոդվածի: | 1990 թ. սեպտեմբերի 2-ին: |
| 5. | Василькова Ю. В., Василькова Т. А., Социальная педагогика. | М., 2016. |
| 6. | Василькова Т. А., Василькова Ю. В., Социальная педагогика. | М., 2015. |
| 7. | Галагузова М. А. и др., Социальная педагогика. | М., 2018. |
| 8. | Галагузова М. А., Социальная педагогика: Курс лекций. | М., 2017. |
| 9. | Мардахаев Л. Б., Социальная педагогика. | М., 2016. |
| 10. | Методика и технологии работы социального педагога: Учеб. Пособие для студ. Высш. Учеб. Заведений /Алмазов Б. Н., Беляева М. А., Бессонова Н. Н. и др., под ред. Галагузовой М. А., Мардахаев Л. В.. | М., 2014. |
| 11. | Мудрик А. В., Социальная педагогика: Учеб. Для студ. Пед. Вузов / Под. Ред. Сластенина В. А.. | М., 2015. |

| | | |
|---|---|---|
| 12. | Никитина Л. Е., Социальная педагогика. Учеб. Пособие для вузов. | М.,2016. |
| 13. | Овчарова Р. А., Справочная книга социального педагогика: | М., 2015. |
| 14. | Социальная педагогика: Курс лекций /Под. Общей ред. М. В. Галагузовой, | М., 2017. |
| 15. | Социальная педагогика: Учеб. Для студ. Высш. Учеб. Заведений / Под.<br>Ред. Никитина В. А.: | М., 2015. |
| 16. | Կրթության կազմակերպման գործընթացում կիրառվող աջակցող տեխնոլոգիաներ<br>Ուղեցույց-ձեռնարկ | Երևան – 2023 |
| 17. | Ներառող դասավանդում մեթոդական ձեռնարկ մանկավարժների համար | Երևան – 2023 |
| 18. | Մանկավարժահոգեբանական աջակցման ծառայությունների նկարագիրը կրթության կազմակերպման գործընթացում: /Մեթոդական ձեռնարկ/ | Երևան – 2023 |
| **Լրացուցիչ գրականություն(ԼԳ)** | | |
| 1. | Անտոնյան Մ., Գմյուր-Կարապետյան Ա., Դուրյան Ն., Երեխաների պաշտպանություն: Ուսումնաօժանդակ ձեռնարկ երեխաների պաշտպանության ոլորտի մասնագետների համար (խմբագիր՝ Հարությունյան Ա.): | Եր., 2009: |
| 2. | Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ,մեթոդներ, գնահատում: Ձեռնարկ անկավարժների և ուսանողների համար: | Եր., 2003: |
| 3. | Համագործակցային ուսուցում: Ձեռնարկ /Հովհաննիսյան Ա. և ուրիշներ: | Եր., 2006: |
| 4. | ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ընդունվել է 09.11.2004 թ.: | ընդունվել է 09.11.2004 թ.: |
| 5. | ՀՀ Սահմանադրություն: Հոդված 35: Ընդունվել է 06.12.2015 թ.: | Ընդունվել է 06.12.2015 թ.: |
| 6. | Мустаева Ф. А., Основы социальной педагогики. | М., 2015. |
| 7. | Штинова Г. Н., Галагузова М. А., Социальная педагогика,<br>63. http://azps.ru/articles/age/teoriya_konvergencii_v_schterna.html | М., 2016. |
| **Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)** | | |
| 1. | Учебное пособие для вузов, СОЦИАЛЬНАЯ ПЕДАГОГИКА, *Под редакцией профессора* ***В.А. Никитина.*** | Москва, «Гуманитарный издательский центр ВЛАДОС», «Московский государственный социальный университет»- 2018. |

| | | |
|---|---|---|
| 2. | Галагузова М. А. и др., Социальная педагогика: | М., 2015. |
| 3. | Мудрик А. В., Социальная педагогика: Учеб. для студ. пед. вузов /, Под. ред. Сластенина В. А.. | М., 2017. |
| 4. | **Специальная педагогика** Под редакцией Н. М. **Назаровой.** | Москва, ACADEMA-2017 |

## 12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

### 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Գրականություն[9] |
|---|---|---|---|---|
| | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ | | | Նշված է՝ Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտում |
| 1. | 1.1. Սոցիալական մանկավարժությունը որպես գիտություն. օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը: | **ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:**<br>Համագործակցություն, վարքագծային նորմ, սոցիալական փորձ, սոցիալական երևույթ:<br>**ՀԱՐՑԵՐ**<br>1. Մանկավարժությունը գիտություն է ինչի՞ մասին (ի՞նչ է ուսումնասիրում մանկավարժությունը):<br>2. Ե՞րբ է ձևավորվել մանկավարժությունը որպես ինքնուրույն գիտություն, և ո՞վ է հիմնադիրը:<br>3. Որո՞նք են մանկավարժության գիտաճյուղերը:<br>4. Ի՞նչ է ուսումնասիրում սոցիալական մանկավարժությունը:<br>5. Ի՞նչ է սոցիալականացումը:<br>6. Ի՞նչ են սոցիալական ինստիտուտները:<br>7. Ի՞նչ է սոցիալական դաստիարակությունը: | | |

[9] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 8. Ո՞րն է սոցիալական մանկավարժության հասարակական իմաստը:<br>9. Ո՞րն է ժամանակակից սոցիալական դաստիարակության հումանիզմը:<br>10. Ի՞նչն է սոցիալական մանկավարժության ուսումնասիրության օբյեկտը:<br>11. Ի՞նչն է սոցիալական մանկավարժության ուսումնասիրության առարկան:<br>12. Որո՞նք են սոցիալական մանկավարժության մեթոդաբանական հիմքերը:<br>13. Ինչպիսի՞ ժամանակակից սահմանումներ գիտեք սոցիալական մանկավարժության մասին:<br>**ՔՆՆԱՐԿՈՒՄ**<br>***Լսարանում կազմակերպե՛ք քննարկում***<br>• ***Մանկավարժությունը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում. թեմայով՝ ներկայացնելով և համեմատելով, թե որ գիտություններն են ուղղակիորեն ուսումնասիրում մարդուն, և որոնք՝ անուղղակիորեն:***<br>***Լսարանը բաժանե՛ք փոքր խմբերի՝ ապահովելու համար բոլորի մասնակցությունը:***<br>**1.2.**Ո՞ւմ կողմից է առաջին անգամ գործածվել «սոցիալական մանկավարժություն» եզրույթը:<br>2. Ինչպիսի՞ մեկնաբանություններ են մինչ օրս պահպանված | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | «սոցիալական մանկավարժություն» հասկացության վերաբերյալ գերմանական գիտամանկավարժական գրականության մեջ:<br>3. Ո՞վ է սոցիալական մանկավարժության հիմնադիրը:<br>4. Ինչպիսի՞ն է Ուշինսկու մեկնակերպը սոցիալական մանկա-վարժության վերաբերյալ ռուսական իրականության մեջ:<br>5. Ովքե՞ր մեծ ներդրում ունեցան Ռուսաստանում սոցիալա-կան մանկավարժության զարգացման գործում 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին:<br>6. Ինչպիսի՞ն են 19-րդ դարի հայ մանկավարժների տեսա-կետները մարդու անձի ձևավորման և զարգացման գործընթացում միջավայրի մեծ դերակատարության վերաբերյալ:<br>7. Ինչպիսի՞ն է սոցիալական մանկավարժության դրվածքը Հայաստանում 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին:<br><br>***Ուսումնասիրե՛ք և պատրաստե՛ք զեկուցումներ սոցիալական մանկավարժության ոլորտում արևմտյան, ռուս և հայ մանկա-վարժ-երախտավորների գործունեության և ներդրումների մասին:*** | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. | Սոցիալական մանկավարժությունը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում. կապն այլ գիտությունների հետ: | ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:<br>Օրինաչափություն, մեխանիզմ, թերապևտիկ, հայեցակարգային, սխեմա:<br>ՀԱՐՑԵՐ<br>1. Ո՞րն է սոցիալական մանկավարժության ուսումնասիրության օբյեկտը:<br>2. Ո՞ր գիտությունների հետ է սերտորեն կապված սոցիալա-<br>կան մանկավարժությունը և ինչո՞ւ:<br>3. Ինչպիսի՞ն է փիլիսոփայության և սոցիալական մանկավար-<br>ժության կապը:<br>4. Ինչպիսի՞ն են հոգեբանության և սոցիալական մանկավար-<br>ժության աղերսները:<br>5. Ինչո՞վ է պայմանավորված մարդուն ուսումնասիրող գիտու-<br>թյունների մասին սոցիալական մանկավարժի իմացությունը:<br>ՔՆՆԱՐԿՈՒՄ<br>***Լսարանում անցկացրե՛ք քննարկում՝ «Ինչի՞ն են նպաստում մարդուն ուսումնասիրող տարբեր գիտությունների կապն ու փոխգործակցությունը» թեմայով՝ ուշադրություն դարձնելով և մեկնաբանելով, թե դրանցից որոնք են ուղղակիորեն ուսում-<br>նասիրում մարդուն, իսկ որոնք՝ անուղղակիորեն:*** | | |
| 3. | Սոցիալական մանկավարժության հիմնական հասկացությունները: | ՀԱՐՑԵՐ<br>1. Ինչո՞վ է տարբերակվում յուրաքանչյուր գիտություն: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 2. Ի՞նչ է հասկացությունը:<br>3. Ինչո՞վ են տարբերվում սոցիալական մանկավարժության հասկացություններն ընդհանուր մանկավարժության հասկացու-թյուններից:<br>**ՀԱՐՑՈՒՄ ՇՐՋԱՊԱՏԻՆ**<br>*Ձեզանից յուրաքանչյուրը թող տասը անձի ենթարկի հարցման՝ հետևյալ բովանդակությամբ.*<br>***Հարց. Ինչպիսի՞ն է Ձեր կարծիքը դպրոցում սոցիալական մանկավարժի գործունեության մասին:***<br>*Պատասխան՝*<br>*ա) դրական*<br>*բ) բացասական*<br>*գ) չգիտեմ, տեղյակ չեմ*<br>*Արդյունքներն ամփոփե՛ք լսարանում և տվե՛ք Ձեր մեկնաբա-նությունները:* | | |
| 4. | Սոցիալական մանկավարժության սկզբունքները: | **ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:**<br>Ռազմավարություն, կատեգորիա:<br>**ՀԱՐՑԵՐ**<br>1. Ի՞նչ է սկզբունքը:<br>2. Ի՞նչ դեր են խաղում սկզբունքները յուրաքանչյուր գիտու-թյան համար:<br>3. Ի՞նչ են արտահայտում մանկավարժության սկզբունքները:<br>4. Ի՞նչ ենք հասկանում՝ «բնահարմարության սկզբունք» ասե-լով:<br>5. Ո՞վ է «բնահարմարության սկզբունքի» առաջին հեղինակը | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | մանկավարժության մեջ:<br>6. Ո՞րն է «մշակութահարմարության սկզբունքի» էությունը, և ո՞վ է առաջին անգամ այն մեկնաբանել:<br>7. Ո՞րն է Ուշինսկու կողմից տրված «ժողովրդայնության սկզբունքի» մեկնաբանության տարբերությունը:<br>8. Ի՞նչ է հումանիզմը: Ո՞րն է «հումանիզմի սկզբունքի» էությունը:<br>9. Ո՞րն է հումանիզմի դրսևորումը մանկավարժության մեջ:<br>50<br>**ՔՆՆԱՐԿՈՒՄ**<br>***Անցկացրե՛ք լսարանում քննարկում՝ «Հումանիզմի դրսևորման պակասը հասարակությունում. ծնող պատճառներն ու հետևանքները» թեմայով: Քննարկման ավարտին կազմե՛ք «Հումանիզմի հռչակագիր»՝ ուղղված մարդկանց (մարդկությանը):*** | | |
| 5. | Սոցիալական մանկավարժության գործառույթները: | **ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:**<br>Ինքնադաստիարակություն, կոորդինացում:<br>**ՀԱՐՑԵՐ**<br>1. Ի՞նչ է «գործառույթ» հասկացությունը:<br>2. Ի՞նչ է ներառում «դաստիարակչական» գործառույթը:<br>3. Ի՞նչ է «սոցիալ-իրավական» գործառույթը:<br>4. Ո՞րն է «սոցիալ-վերականգնողական գործառույթի» էությունը:<br>5. Որո՞նք են սոցիալական մանկավարժության գործառույթնե- | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | րում ներառված սոցիալական գործառույթները:<br>6. Ինչպիսի՞ կիրառական խնդիրներ են բխում սոցիալական մանկավարժության գործառույթներից:<br>**ՔՆՆԱՐԿՈՒՄ**<br>***Լսարանում անցկացրե՛ք քննարկում՝ «Սոցիալական մանկավարժության գործառույթների հարաբերակցությունը» թեմայով՝ ներկայացնելով և վերլուծելով գործառույթների փոխկապակցվածությունն ու փոխլրացումը:*** | | |
| 6. | Սոցիալական մանկավարժության մեթոդները: | **ԳԻՏԵ՞Ք՝ ԻՆՉ Է:**<br>Ինքնադաստիարակություն, կոորդինացում:<br>**ՀԱՐՑԵՐ**<br>1. Ի՞նչ է «գործառույթ» հասկացությունը:<br>2. Ի՞նչ է ներառում «դաստիարակչական» գործառույթը:<br>3. Ի՞նչ է «սոցիալ-իրավական» գործառույթը:<br>4. Ո՞րն է «սոցիալ-վերականգնողական գործառույթի» էությունը:<br>5. Որո՞նք են սոցիալական մանկավարժության գործառույթներում ներառված սոցիալական գործառույթները:<br>6. Ինչպիսի՞ կիրառական խնդիրներ են բխում սոցիալական մանկավարժության գործառույթներից:<br>**ՔՆՆԱՐԿՈՒՄ**<br>***Լսարանում կազմակերպե՛ք քննարկում՝ «Սոցիալական մանկավարժության մեթոդների արդյունավետ կիրառման*** | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | *գործոնները» թեմայով՝ հանգամանորեն մեկնաբանելով, թե ինչ գործոններ պետք է հաշվի առնի սոցիալական մանկավարժն իր գործունեության ընթացքում սոցիալական մանկավարժության մեթոդները կիրառելիս: Քննարկումն ավարտելիս եզրահանգումները ներկայացրե՛ք սխեմատիկ ձևով (գծագրով):* | | |
